

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Իմաստուն Սողոմոն Թագաւորը



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 22 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Դաւիթ թագաւոր Աստուծոյ մեծ մարդն էր: Իր թագաւորութեան ատեն Իսրայել տասն անգամ աւելի մեծցած էր քան Սաուլի թագաւորութեան ընթացքին:



1

Ան այլեւս չէր կրնար կառավարել: Դաւիթ ծերացած էր եւ յոգնած եւ հիւանդ, իր կեանքը աշխարհի վրայ այլեւս կը հասնի իր աւարտին:



2



Դաւիթի տղոցմէ, Ադոնիա, Իսրայէլի ժողովուրդին ըսաւ, որ հիմա ինք թագաւոր պիտի ըլլայ: Թէեւ իր անունը "Իմ Տէրս Աստուածն է" կը նշանակէ, Ադոնիա բարի մարդ մը չէր:

3



Ան փորձեց գահը գողնալ, գիտնալով, որ Դաւիթ շատ տկարացած էր եւ չէր կրնար զինք դիմադրել: Սակայն Աստուած տարբեր ծրագիրներ ունէր:

4

Դաւիթին կինը Բերսաբէ գիտեր, որ իր տղան Սողոմոնը թագաւոր պետք է որ ըլլայ: Ան Դաւիթին պատմեց Ադոնիայի ծրագրին մասին: Հիւանդ վիճակով Դաւիթ իր շուրջ հաւաքեց կառավարիչները եւ հանրութեան մէջ Սողոմոնը թագաւոր հռչակեց Իսրայէլի վրայ:



5

Սողոմոն այլեւս որեւէ մէկ հարց չունէր Ադոնիա հետ, որովհետեւ Իսրայէլի ժողովուրդը կը հաւատար Դաւիթի: Դաւիթ ըսաւ, որ Սողոմոն ընտրուած էր Աստուծմէ ըլլալու համար իրենց վրայ թագաւոր: Կարճ ժամանակ ետք Դաւիթ մահացաւ:



6



Նախքան մեռնիլը Դաւիթ խօսեցաւ Սողոմոնի, որ ինչպէս պետք էր ան հնազանդի Աստուծոյ եւ ըլլար բարի թագաւոր: "Աստուծոյ ճամբով քալէ, որպէսզի զարգանաս ամէն ինչի մէջ, որ կ'ուզես ընել", ըսաւ Դաւիթ իր տղուն: Այդ լաւ խրատ էր, ետքը Սողոմոն նստաւ իր հօր գահին վրայ եւ իր թագաւորութիւնը հիմնուեցաւ ամուր հիմերու վրայ:

7

Երեկոյ մը Սողոմոն երագ մը տեսաւ: Իր երագին մէջ Աստուած երեւցաւ իրեն եւ ըսաւ. "Ուզէ՛, ինչ որ կ'ուզես, որ տամ քեզի": "Ի՞նչ կրնայի պահանջած ըլլալ":




8

Սողոմոն խնդրեց իմաստութիւն,
որպէսզի ըլլայ լաւ թագաւոր:
Այս երիտասարդ
թագաւորին
խնդրանքը
գոհ պահեց
Աստուծոյ:



9

Սողոմոն առաւ այն ինչ որ
խնդրած էր, սակայն
Աստուած անոր
խոստացաւ մեծ
հարստութիւն
եւ պատիւ:



10

Շատ երկար ժամանակ
չանցաւ երբ ժողովուրդը
նկատեց Սողոմոնի
իմաստութիւնը: Օր մը
երկու մայրեր եկան իր
մօտ, մէկը մանուկով մը:
"Այս կնկան տղան
մեռաւ երեկոյեան եւ ան
իր մեռած մանուկը իմ
ողջ մանուկովս
փոխարինեց", ըսաւ
կիներէն մին:




11

"Ո՛հ: Բայց ողջը իմ
տղաս է, եւ մեռածը
քուկդ", ըսաւ միւսը:
Ի՞նչպէս կրնար
թագաւորը գիտնալ,
թէ ո՞ր մայրը
իրականութիւնը
կ'ըսեր:



12

Ետքը թագաւորը ըսաւ. "Սուր մը բերեք ինծի": Եւ
անոնք սուր մը բերին թագաւորին: Ի՞նչ կը կարծես,
որ թագաւորը կը ծրագրեր ընել սուրով:



13

Եւ թագաւորը ըսաւ. "Բաժնեցէք ապրող մանչուկը
երկուքի եւ մէկ կէտը տուէք մէկուն, իսկ միւս կէտը
միւս կնկան": Ողջ տղուն մայրը ըսաւ. "Ով տեր իմ,
իրեն տուր ապրող մանչուկը եւ չ'ըլլայ զինք
մեռցնես":



14




Բայց միև կինը ըսաւ. "Թող ո՛չ ինծի, ո՛չ ալ քեզի ըլլայ, բայց թող բաժնենք պգտիկը":

15




Ուրեմն թագաւորը ըսաւ. "Առաջին կնկան տուէք պգտիկը: Ան է մայրը": Եւ ամբողջ Իսրայէլը լսեց այդ դատողութեան մասին, եւ շատ բարձր գնահատեցին ու յարգեցին թագաւորը: Անոնք տեսան, որ Աստուծոյ իմաստութիւնը անոր մէջն է:

16




Իսրայէլի ժողովուրդը տաճար չունէր, որուն մէջ պաշտեր Աստուծոյ: Երբ Դաւիթ ծրագրեց կառուցել Աստուած ըսաւ.

17




"Քու որդիդ պիտի կառուցէ տունս իմ անունիս համար", ուրեմն Սողոմոն սկսաւ կառուցել սքանչելի տաճար մը Երուսաղէմի մէջ:

18



Եօթը երկար տարիներ տեւեցին տաճարի շինութիւնը:


19



Բայց եկաւ այն մեծ օրը, ուր ամենքը ժողուած ունկնդրեցին Սողոմոնի նուիրումը այս տաճարին տիրոջը:


20

Աքանջելի աղօթք
մը ետք, թագաւորը
եւ ժողովուրդը
ուրախութեամբ
հազարաւոր
զոտեր ...




21

... մատուցեցին եւ
մեծ խրախճանք մը
սարքեցին երկու
շաբթուան վրայ:



22

Այսկէ ետք, Աստուած
երեւցաւ անգամ մը եւս
Սողոմոնի եւ խոստացաւ
զինք օրհնել եւ հարայելը
այնքան ատեն որ անոնք
Տիրոջ կը
հնազանդէին:



23

Դժբախտաբար ոչ Սողոմոն եւ
ոչ ալ ժողովուրդը տեսական
կը հնազանդէին Աստուծոյ:
Թագաւորը ամուսնացաւ
շատ մը կիներու հետ,
որոնց Աստուած
չէր ուզեր:



24

Անոր հեթանոս, կիները անոր
սիրտը դէպի կուռքերուն
դարձուցին, եւ իր սիրտը
հաւատարիմ չէղաւ Տիրոջ իր
Աստուծոյ, ինչպէս որ էր իր
հօր Դաւիթի սիրտը:




25

Երբ Սողոմոն սպասեց իր առիթը հնազանդելու
Աստուծոյ Յերոբովամ իր սպաներէն մէկը
տարօրինակ բացատրութիւն մը ունեցաւ:




26

Մարգարե մը անոր ըսաւ, որ Աստուած պիտի բաժնէ Սողոմոնի թագաւորութիւնը եւ Յերոբովամ պիտի իշխէ տասներկուքէն տասը տոհմերուն վրայ:




27

Յերոբովամ շուտով Եգիպտոս փախաւ: Ան գիտցաւ, թէ Սողոմոն պիտի մեղցնէ իրեն եթէ մնար:




28

Վերջապէս Սողոմոն մահացաւ: Իր որդին, Ռոբովամ տուրքի ենթարկեց ժողովուրդը անելի քան իր հայրը: Տասը տոհմեր ըմբոստացան եւ Յերոբովամ ընտրեցին իր իրենց առաջնորդ:



29

Սողոմոնի հզօր թագաւորութիւնը բաժնուեցաւ երկուքի, ճիշդ ինչպէս որ Աստուծոյ մարգարէն ըսած էր: Աստուած չէր կրնար օրհնել անհնազանդութիւնը:



30

Իմաստուն Սողոմոն թագաւորը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Թագաւորաց 1 - 12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեզ կը կոչէ: Մեզին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

